պայուսակս[ա] և կերպասս, յաւտարս և յան-
կայունս՝ ի խլիզանս և յանիրաւս, ի գողութս
և ի ցեցուտս, և յարատաւոր կարասս: Անդ
շինեսցուք և մթերեսցուք ուր ոչ գոյ երկեան,
տխրանք և տկարութիւն. ոչ ծերանալ և ոչ
զարգաշիլ. այլ երիտասարդք միշտ անտըրտում
և անվրդով, ի ցնծութիւն և ի խրախութիւն,
ի գինարբուս և ի հրճըւանս յաւիտենականս:
Անդ ուր կոչնատէր և հարիֆ է Հայրն հա-
մայնից, և մատռուակ՝ Որդին միածին, և բա-
ժակ Հոգին ճշմարիտ, խրախակից՝ իննեակ
դասուց բոցանիւթ բանակացն, և դռնաբաց՝
վէմն անվանելի: Ընդարձակ է վայրն և առա-
գաստն, և բազում են աթոռքն և աւթևան-
քըն, և զամենեսեան կոչէ կոչնատէրն. եկայք
յոժարութեամբ, սակայն լըւացեալ պատմու-
ճանաւ հարսանեաց հանդերձիւ: Ու եթէ
սիրող ես տաճարի և անդաստանի, անդ ստա-
ցիր ի սեփհական հայրենիս. բազում է վա-
ճառոյն և առատ, ոչ ըստ արժանաւորութեան
է արժէքն, այլ ըստ կարին և ըստ կամացն.
զի բիւր տաղանդն և մի բնիոնն, հաւասար
ստանան:

Զնա սիրեաց երանելին Մեսրովբ [Թղ.

ա. Ձեռ. պայուսակ. Աճ. Շիրակ ունի կշռի մտքով, բայց իսկապէս այդ բառը չէ բացատրուած: